

բակ զլուխն ամբողջ, որուն վրայ ճոխ և գո՛հ և ծա-  
ծուկ խինդ մը ծեփուած էր, ճարտարպետօրէն յեցած  
հաստուն վիզի մը վրայ՝ կը ճօճեցունէր ասիական ու  
պուսական հին ազնուականութիւն մը, հրաման մը:  
Շրթունքը կիսաբաց ու աչքն համարձակահայեաց՝ ա-  
մէնապատրաստ դիրք մը ունէին յանկարծ ըսելու և  
ակնարկելու վեհաբար — ԲՆՆ Է ՄՆ, ՅՏ՝ — որուն պէտք  
էր՝ դէմի աղերսաւորը խոնարհութեամբ պատասխանել  
ու ըսել անմիջապէս այդ ԲՆՆ: Ամիրան՝ այն օրն հա-  
գած էր (ու թերեւս միշտ ալ կը հագնէր) ԳՈՒՄԱԼԵՒԻՆ  
ԲՈՒՄԱՅ մը պարզ, և՛ առանց գուլայի նոյնպէս պարզ օճի-  
քով ու մթազոյն փողպատով շրջապատած էր իր մա-  
ղասուն փողը. ձեռքն ալ ունէր բարակ շիղ մը երե-  
րուն, որ կը ծառայէր իբրեւ մտրակ: Սոյս ձեւերն էին՝ որ  
կարքերը, գրեթէ նոյնութեամբ, օրինակուեցան իր ստո-  
րակարգեալներէն խորագէտ ու ճարպիկ յաջօրէ մը,  
որ դիզեց իբր իրեն չափ հարստութիւն, այլ չունեցաւ  
իրեն չափ ազդեցութիւն և անուն:

Կանոնական ահուզողով մը՝ Ամիրան բարեւոյնե-  
րուն հետ ես ալ երկու — երեք վայրկեան կեցայ ու  
դիտեցի մեծարեալ ձիաւորը, որուն հետ մեր ընտանիքն  
ալ ունէր խնամեկան կցորդութիւններ, և որուն վրայ  
կը պատմուէին մեր տունը՝ բաւական ներքին բաներ  
ալ, ու կը պատմուին կը տեսնէ և կարձազանգնն  
մինչեւ ցարդ: Սոյս, տեսայ ու դիտեցի կարապետ Ա-  
միրան, ո՛չ Անաքարսիսի մը, ո՛չ ալ Քերոնացիի մը  
աչքով, այլ մանուկ համարձակութեամբ մինչ թաղիս  
դպրոցէն ու Արապզատէի լեռնէն անդին չէր անցներ  
մտային ալ մարմնական ալ տեսութեանցս նորիզոնը.  
Դիտեցի այդպէս, և՛ տղայ՝ ըսի իւրովի — Ամիրան աս  
է եղեր. — ինչպէս թերեւս ըսեն հիմայ զիս ընթերցող  
տղաքն ալ:

Ասոր վրայ տարի մը չանցած՝ ըսին — կարապետ ա-  
միրան յանկարծամահ եղեր է: Եւ որովհետեւ լուսանը-  
կարը չէր հանած՝ Պէշիքթաշի տանը մէջ, իր անշնչա-  
ցած մարմինին վրայէն, քաշեցին իր պատկերը: Սոյս  
հակիրճ նկարագիրէն աւելին տեսնել փափագողը կըր-  
նայ դիտել այդ մեծադիր պատկերն ամիրայական՝ Փա-  
փազեան Գեորգ էֆէնտի որչի Փափազեան Արթաքի